ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից 2017 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկների 2017 թվականի գլոբալ բյուջեն կազմում է 1537296.4 ՀՀ դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով՝ 1024933.2 դրամ, հիվանդանոցային ծառայության գծով 512363.2 դրամ: Այն 2016 թվականի համեմատ նվազել է 2.4%:

2017 թվականի 12 ամսվա դրությամբ մարզի բուժհիմնարկների կատարողականը կազմում է մոտ 1509957.5 ՀՀ դրամ: Գլոբալ բյուջեյի հաշվարկով 12 ամիսների դրությամբ 98.2%-ով ստացվել է կատարողականի գումարը:

Մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպություններում 2017 թվականի ընթացքում վճարովի ծառայության և այլ մուտքերը կազմել են 121933400 ՀՀ դրամ:

2017 թվականի ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների թիվը կազմել է 300687, որից 68413՝ 0-18 տարեկանների, տնային կանչերի թիվը 25889 է, որից 0-18 տարեկանների՝ 18237, տնային ծնունդները՝ 0:

Հիվանդանոցային բուժօգնությունը մարզի տարածքում կատարվում է 4 բժշկական և 2 առողջության կենտրոններում: 2017 թվականի ընթացքում ստացիոնար բուժօգնություն և սպասարկում ստացել են 5020 հիվանդներ: Գրանցվել է շտապ օգնության 12457 կանչ: Ծնունդները 2017 թվականին 1653 է, որից 775-ը՝ մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում:

2017թ-ի ընթացքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համար հետազոտվել են մարզի բոլոր հղիները:

2017 թվականի ընթացքում սահմանված ժամկետներում մարզի բուժհաստատություններին է բաշխվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով գնված 60979492.30 ՀՀ դրամի և հումանիտար ճանապարհով ստացված 27656668.05 ՀՀ դրամի դեղորայք:

Իմունիզացիայի ազգային ծրագրի շրջանակներում իրականացվել են պատվաստում-ները՝ ըստ ազգային օրացույցի: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշման՝ պատվաստումների ազգային օրացույցի մեջ ընդգրկվել է մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստանյութը:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության չորս առևտրային կազմակերպություններում, մարզպետը՝ որպես պետության կողմից լիազոր ներկայացուցիչ, իր լիազորությունների շրջանակներում, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների

մասին» օրենքը, ամբողջությամբ վերահսկել է ընկերությունների 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը: Հաստատվել են 2017 թվականի տարեկան նախահաշիվները, հաստիքացուցակները և վճարովի ծառայությունների գնացուցակները: Իրականացվել է ընկերությունների տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: 2017 թվականի օգոստոսի 1-ից մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպությունների նախահաշիվներում կատարվել են համապատասխան փոփոխություններ վճարովի ծառայությունների մասով՝ 34 միլիոն դրամով ավելացել է վճարովի ծառայության գումարի չափը՝ 104 միլիոն դրամից դառնալով 138 միլիոն դրամ:

Ընդունվել են «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով և ընկերությունների կանոնադրությամբ նախատեսված որոշումներ և այլ իրավական ակտեր:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկներում մարզպետի անմիջական հսկողությամբ, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ակտիվ մասնակցությամբ իրականացվում է ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, արձանագրային որոշումների, ՀՀ առողջապահության նախարարի հրամանների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման ապահովումը:

Կազմակերպվել է ՀՀ Կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն՝ “Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին” որոշման և ‘Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման մասին’ 2017 թվականի չափորոշիչների պահանջների կատարումը:

2008 թվականի հուլիսի 1-ից, համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 30.05.2008թ. թիվ 761-Ա ‘Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման մասին’ հրամանի կազմակերպվում է ծննդօգնության պետական հավաստագրի համակարգի ներդրման գործընթացի իրականացումը: Ամսական կտրվածքով վարչության կողմից ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվում ծնունդների վերաբերյալ տեղեկատվություն:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 20.05.2013թ. թիվ 1371-Ա հրամանի մարզում կազմակերպվում է ծննդօգնության հավաստագրերի տրամադրումը հղիներին: Ուղեգրումները դարձել են առավել նպատակային և հասցեական: Առողջապահության նախարարությունից ստացվել և մարզի ծննդօգնություն և հղիների հսկողություն իրականացնող բուժհիմնարկներին է տրամադրվել 2020 ծննդօգնության հավաստագիր:

Ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում ներդրվել է որակի բարելավման և գնահատման ծրագիրը, բուժանձնակազմը անցել է մի շարք վերապատրաստումներ:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի “Երեխայի առողջության պետական հավաստագրի ներդրման գործընթացն ապահովելու մասին” N 2093-Ա հրամանի՝ մարզում շարունակվում է մանկական հավաստագրերի հատկացման գործընթացը, բուժհիմնարկներին տրվել է երեխայի առողջության պետական 1820 հավաստագիր՝ 930 տղա, 890 աղջիկ, ինչպես նաև 16.05.2011 թվականի ՀՀ առողջապահության նախարարի “Երեխայի առողջության և ծննդօգնության պետական հավաստագրերի ներդրման գործընթացի մոնիտորինգի մասին” N 914-Ա, և “Երեխաների արտահիվանդանոցային նեղմասնագիտական խորհրդատվության կազմակերպման գործընթացի բարելավման մասին” N 920-Ա հրամանների համաձայն իրականացվել է այդ գործընթացների մոնիտորինգը մարզպետարանում, ինչպես նաև ծննդօգնություն և երեխայի բուժօգնություն մատուցող բուժհաստատություններում ստեղծված մոնտորինգային հանձնաժողովների կողմից:

Հոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառված անձանց մասին, ամսական կտրվածքով բժշկական կենտրոնների կողմից ներկայացվում է տեղեկատվություն ՀՀ ոստիկանության պետավտոտեսչություն:

Համաձայն ՀՀ Կառավարության 30.03.2006թ. թիվ 420-Ն ,,Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին,, որոշման և ՀՀ Առողջապահության նախարարի 2006 թվականի հունվարի 18-ի թիվ 57-Ն հրամանի՝ մարզում իրականացվում է առողջության առաջնային պահպանման բժշկի ընտրության գործընթացը:

Համաձայն ՀՀ կառավարության 25.10.2012թ. թիվ 43 արձանագրային որոշման՝ “Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին” թիվ 43 արձանագրային որոշման 2017 թվականի մայիսի 1-ից Արագածոտնի մարզի բժշկական կազմակերպություններում ներդրվել է էլեկտրոնային առողջապահության համակարգը: Կազմակերպվել են դասընթացներ մուտքագրող օպերատորների համար, ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել մարզի ստացիոնար և ամբուլատոր բուժհաստատությունների ցանկի, առկա օպերատորների, բժշկական անձնակազմի, տեխնիկայի քանակի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև անհրաժեշտ համակարգիչների պահանջարկ: Մարզի բուժհաստատությունների օպերատորների շրջանակում իրականացվել է հայոց լեզվով Typing թեստի անցկացում երկու փուլով, որի արդյունքը կազմում է 46%:

Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում իրականացվում են երեք տարածաշրջանային բժշկական հանձնաժողովների կողմից, որոնք ապահովված են համապատասխան վերապատրաստում անցած բժշկական կադրերով: Բուժհիմնարկները ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով: Զորակոչերից տարկետում ստացած հիվանդ պատանիների բուժօգնությունը մարզի բուժհիմնարկներում կազմակերպելու համար տրվել են հանձնարարականներ: Նախորդ տարվա զորակոչային և նախազորակոչային բժշկական հանձնաժողովների աշխատանքների վերլուծության արդյունքում պարզվեց, որ բարելավել են հանձնաժողովի աշխատանքները և համեմատած նախորդ տարվա արդյունքների՝ նվազել է հետ վերադարձների թիվը:

Ֆինանսական կարգապահության պահպանման և խնայողության ռեժիմի ապահովման նպատակով 2017 թվականին մարզի բժշկական կազմակերպություններում իրականացվել է բուժհիմնարկների կադրային և կառուցվածքային հզորությունների օպտիմալացում: Մշակվել են ֆինանսական կայունացման ծրագրեր, ծախսերի տնտեսման և վճարովի ծառայության մուտքերի ավելացման հաշվին բուժհիմնարկները բարելավվել են իրենց ֆինանսատնտեսական ցուցանիշները, արդյունքում աշխատում են շահույթով, բարձրացել է բուժհիմնարկների կառավարման արդյունավետությունն ու գործարար ակտիվությունը:

ՀՀ Արագածոտնի մարզի առողջապահական համակարգում իրականացվել են ՀՀ Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 958-Ն որոշմամբ հաստատված օպտիմալացման ծրագրերը:

1.Աշտարակի ԲԿ ՓԲԸ-ում կրճատվել է մահճակալների թիվը՝ 70-ից հասցնելով 45-ի, որի արդյունքում ազատվել է թերծանրաբեռնված N2 մասնաշենքը՝ 1362քմ:

2.Ծաղկահովիտի ԲԿ ՓԲԸ-ում կատարվել է կարգավիճակի փոփոխություն՝ բժշկական կենտրոնի վերակազմակերպում առողջության կենտրոնի: Կրճատվել է մահճակալների թիվը՝ 20-ից հասցնելով 7-ի, որի արդյունքում ազատվել են նախկին ինֆեկցիոն մասնաշենքը՝ 397.1քմ, ինչպես նաև ավտոտնակներ՝ 189քմ, կաթսայատուն 134.4քմ չօգտագործվող և թերծանրաբեռնված տարածքներ:

3.Լուծարվել է Ուշիի ԱԱՊԿ ՀՈԱԿ-ը և գործում է որպես Ուշիի ԲՄԿ՝ Կարբիի ԲԱ ՀՈԱԿ-ի կազմում:

Ավարտին է մոտենում վերոնշյալ շենք-շինությունների ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու գործընթացը: Օպտիմալացման արդյունքում խնայված միջոցների հաշվին նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ և բուժսարքավորումների ձեռքբերում:

Մարզի բոլոր հիվանդանոցները պարբերաբար ձեռք են բերել և մշտապես ապահովված են անտիգյուրզինով, հակափայտացման, հակաբոտուլինային շիճուկներով, հակակատաղության վակցինայով և հակափայտացման անատոքսինով:

2017 թվականի ընթացքում կազմակերպված մասսայական միջոցառումների ժամանակ վարչության կողմից կազմակերպվել է բնակչությանը շտապ բուժօգնության մատուցման գործընթացը: Շտապ օգնության հերթապահություններ են սահմանվել տարվա ընթացքում կայացած սպորտային և համերգային միջոցառումների ժամանակ:

Հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման համար 2017 թվականին ձեռնարկվել են միջոցառումներ, որոնք ուղղված էին պերինատալ մահացության ցուցանիշի նվազեցմանը, մայրական մահերի բացառմանը, հիվանդանոցային ծառայությունների որակի ցուցանիշների բարելավմանը, որի արդյունքում նվազել են հիվանդանոցային մահաբերությունը, հիվանդի բուժման միջին տևողությունը, նկատվել է վիրահատական ակտիվության բարձրացում, որին զուգահեռ արձանագրվել է հետվիրահատական բարդությունների նվազեցում:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում լեյշմանիոզի դեմ պայքարի և կանխարգելման 2017 թվականի ծրագրի և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ գյուղատնտեսության նախարարների համատեղ հրամանի՝ իրականացվել են լեյշմանիոզի դեմ պայքարի և կանխարգելման ծրագրի աշխատանքները: ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի “Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագրի ավարտից հետո ՀՀ Արագածոտնի մարզում 2017 թվականի ընթացքում շարունակվել են իրականացվել մալարիայի կանխարգելման ուղղությամբ աշխատանքներ:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում պարբերաբար իրականացվում են հակահամաճարակային միջոցառումներ, սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով: Այս կապակցությամբ բարձրացված բոլոր հարցերը մարզպետի հանձնարարությամբ նախապատրաստվել և մանրամասն քննարկվել են մարզպետի մոտ անցկացված խորհրդակցություններում, մարզխորհրդի նիստերում և ստացել համապատասխան լուծում մարզում հակահամաճարակային և սանիտարահիգինեիկ միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Մարզպետի հանձնարարությամբ մարզի համայնքների ղեկավարներին հանձնարարվել է ապահովել խմելու ջրի կանխարգելիչ քլորացումը, ձեռք բերել բավարար քանակի ախտահանիչ նյութեր, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական կազմակերպություններում օգտագործել ախտահանիչ և վարակազերծող նյութեր, ապահովել օբյեկտներում հիգինեիկ հակահամաճարակային ռեժիմը:

Բնակելի շենքերի, ինչպես նաև համայնքներում սանիտարական վիճակի հետ կապված ուսումասիրությունների արդյունքում առկա հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետին,

քաղաքապետերին, համայնքապետերին տրվել են գրություններ ժամկետներով, որի կատարման ապահովումը ստուգվել է Արագածոտնի մարզային կենտրոնի կողմից: Բնակավայրերի սանիտարական վիճակի հարցը քննարկվել է մարզպետարանում և մարզպետի կողմից համայնքապետերին տրվել է հանձնարարական բնակավայրերում բավարար սանիտարական վիճակ ապահովելու համար:

Մարզպետի անմիջական հսկողությամբ ՀՀ ԿԱ Գույքի կառավարման վարչություն ներկայացվել են ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ 2016 թվականի տարեկան և 2017 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունները:

Մարզպետարանի ենթակայությամբ գործում են մարզի չորս բժշկական և մեկ առողջության կենտրոններ, տասնհինգ ամբուլատորիաներ և մեկ առողջության կենտրոն գործում են համայնքապետարանների ենթակայության տակ:

Մարզպետարանի և համայնքապետարանների ենթակայության տակ գտնվող բուժհիմնարկներում մարզպետի անմիջական հսկողությամբ, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ակտիվ մասնակցությամբ իրականացվում են ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, ՀՀ առողջապահության նախարարի հրամանների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման ապահովումը:

2017 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկներից պետպատվերի շրջանակներում Երևանի և այլ մարզերի բուժհաստատություններ ուղեգրվել է 5119 դեպք: Համաձայն ՀՀ ԱՆ 13.03.2014թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզային հանձնաժողովների կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կենտրոնական հանձնաժողովի կողմից ուղեգրվող հիվանդների սահմանված չափաքանակը հաստատելու մասին» թիվ 482-Ա հրամանի՝ 2017 թվականի պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման է ուղեգրվել մարզի սոցիալապես ծանր պայմաններում գտնվող 20 քաղաքացի: Երևան ուղեգրվում են հիմնականում նեղ մասնագիտական բուժօգնություն ստանալու համար՝ ակնաբուժական, սրտաբանական, ուռուցքաբանական, արյունաբանական, հոգեբուժական, դժվարամատչելի հետազոտություններ իրականացնելու և նորագույն տեխնոլոգիաներով մատուցվող այլ բժշկական ծառայությունների համար, որոնք բացակայում են մարզում:

Պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի կողմից 30 քաղաքացի ուղեգրվել է մարզի բուժհաստատություններ:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման նպատակով “Ջերմուկի առողջարան”, Աղվերանի “Գանձաղբյուր”, “Վանաձորի ԱՍԱՐ” և Ջերմուկի “Արարատ” մանկական առողջարաններ են ուղեգրվել 59 մեծահասակ և 4/4 երեխա:

Մարզի տարածքում իրականացվում են առողջապահական մի շարք այլ ծրագրեր World Wision կազմակերպության կողմից կատարվում են աշխատանքներ Թալինի և Ապարանի տարածքներում: ՀՀ ցռողջապահության նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ և World Wision-ի հետ համագործակցությամբ մարզի Թալինի և Ապարանի տարածքներում իրականացվում է «Երեխայի առողջության և սնուցման բարելավման» համապարփակ ծրագիր: Կազմակերպության կողմից իրականացվում են դասընթացներ բարձր դասարանների աշակերտուհիների, հղիների և մայրերի համար: Համայ-նքային կտրվածքով ստեղծվել են մայրերին աջակցող խմբեր: Անցկացվել են “Մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում”, “ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում” և “Առողջ սնունդ, առողջ ապրելակերպ” թեմաներով դասընթացներ:

World Wision կազմակերպության կողմից 2017 թվականի ընթացքում Թալինի և Ապարանի տարածաշրջաններում կազմակերպվել են՝

- Դասընթաց վաղ տարիքի երեխաների ավելի քան 1199 ծնողների և խնամողների համար՝ <<Առա’ջ, փոքրի’կ, առա’ջ>> զարգացման վաղ խթանման վերաբերյալ, սննդի պատրաստման գործնական դասնթացներ
- Կարողությունների զարգացման թեմայով դասընթաց բժիշկների, բուժքույրերի և մանկապարտեզի աշխատակիցների համար (155 հոգի)
- Մանկական կենտրոնի կազմակերպում Ապարանի տարածքի Վարդենիս գյուղում, հաճախում է 11 երեխա
- Մանկական կենտրոնի կազմակերպում Թալինի տարածքի Կարմրաշեն գյուղում, հաճախում է 20 երեխա
- Մանկական տիկնիկային թատրոն “Առողջ ապրելակերպի լուսաբանում” թեմայով (մասնակցել է 1090 երեխա)

2017 թվականի ընթացքում կազմակերպված մի շարք սեմինար-դասընթացներին մասնակցել են մարզի բժշկական կազմակերպությունների բուժաշխատողները՝

1. **2017 թվականի ապրիլի 26-28**, նորածինների խնամք ու բուժօգնություն թեմայով դասընթացներ նեոնատոլոգների և ծննդատան մանկական բուժքույրերի համար:
2. **2017 թվականի մայիսի 6**, «Ժամանակակից խնդիրները սիրտ-անոթային հիվանդությունների բնագավառում» թեմայով սեմինար:
3. **2017 թվականի մայիսի 13**, պտղի սրտի հետազոտություն թեմայով սեմինար-դասընթաց սոնոգրաֆիայի բժիշկների համար Աստղիկ ԲԿ-ում:

4. **2017 թվականի մայիսի 20-21**, մանկաբարձությունում և գինեկոլոգիայում ուլտրաձայնային ախտորոշման հայկական ասոցիացիայի նախագահ Կ.Թոխունցի «Պտղի էխոկարդիոգրաֆիա» թեմայով հեղինակային դասընթաց սոնոգրաֆիայի բժիշկների համար:
5. **2017 թվականի մայիսի 22-26,** «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն» թեմայով դասընթաց գինեկոլոգների, ուրոլոգների, մաշկավեներաբանների, սեքսապաթոլոգների, նարկոլոգների, հոգեբույժների, ընտանեկան բժիշկների, նեոնատոլոգների, մանկաբույժների, քիթ-կոկորդ-ականջաբանների, նեֆրոլոգների, ակնաբույժների, ստոմատոլոգների, վիրաբույժ-ների համար:
6. **2017 թվականի հունիսի 8-9**, չարորակ նորագոյացությունների հաշվառման միասնական թերթիկի շրջանառության և լրացման կարգի վերաբերյալ մասնագիտական քննարկում և դասընթաց հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում չարորակ նորագոյացություններով հիվանդների հաշվառում և վարում իրականացնող ուռուցքաբանների և այլ մասնագետների համար:
7. **2017 թվականի հունիսի 15-30**, ՀՀ իմունականխարգելման ոլորտում մեթոդական ցուցումների վերաբերյալ բուժաշխատողների շրջանում դասընթացներ ընտանեկան բժիշկների, մանկաբույժների, համաճարակաբանների, պատվաստման կաբինետի բժիշկների համար:
8. **Տարեկան երկու անգամ**, գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1c) չափումը ու դասընթացներ դիաբետով հիվանդների համար:
9. **2017 թվականի հունիսի 26-30**, «ՄԻԱՎ վարակի ախտորոշում» թեմայով 5-օրյա դասընթաց բժիշկ-լաբորանտների համար:
10. **2017 թվականի օգոստոսի 7-10**, «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում գրանցված վնասվածքների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների մասին» (Ձև No 9) երկժամանոց մեկական դասընթաց ընտանեկան բժիշկների, թերապևտների, վնասվածքաբանների, հաշվետվական ձևերը լրացնող բուժվիճակագիրների համար:
11. **2017 թվական օգոստոսի 16-17**, “Ծննդի, Պերինատալ մահվան և Մահվան մասին բժշկական վկայականները և դրանց միասնական էլեկտրոնային կառավարման համակարգով լրացման/պատրաստման և տրամադրման կարգը” թեմայով դասընթացներ:

12. **2017 թվականի սեպտեմբերի 4-5**, Աշտարակի, Ապարանի, Թալինի, Ծաղկահովիտի բժշկական կենտրոնների և Բյուրականի, Օշականի, Փարպիի համապատասխան մասնագետները, գնումների համակարգողների վերապատրաստման դասընթաց:
13. **2017 թվական սեպտեմբերի 14,** սեռական բռնության զոհերի հետ աշխատանքի հմտությունների վերաբերյալ դասընթաց:
14. **2017 թվականի սեպտեմբերի 11-22**, "Մինչև 2 ամսական հիվանդ նորածինների վարումը առողջության առաջնային պահպանման հաստատություններում" թեմայով երկշաբաթյա դասընթաց, 45 մասնակից:
15. **2017թ սեպտեմբերի 25-հոկտեմբերի 6 Մոսկվա և նոյեմբերի 13-26 Սանկտ Պետերբուրգ** "Անհետաձգելի բուժօգնություն մանկաբուժությունում" թեմայով սեմինարներ, մասնակցել են Թալինի և Աշտարակի բժշկական կենտրոնների մեկական մանկաբույժ:
16. **2017 թվականի հոկտեմբերի 23-28**, եռօրյա դասընթաց վաղ տարիքի երեխաների խնամքի վերաբերյալ ԱԱՊ բուժքույրերի համար:
17. **2017 թվականի նոյեմբերի 6-18 Մոսկվա**, գիտա-գործնական դասընթաց մոր և մանկան առողջության պահպանման ոլորտի մասնագետների համար, Աշտարակի ԲԿ 1 մանկաբարձ-գինեկոլոգ:
18. **2017 թվականի նոյեմբերի 13-18**, գրիպի և հետգրիպային բարդություններով հիվանդների վարմանն ուղղված դասընթաց՝ վերակենդանացման բաժանմունքների մասնագետների համար:
19. **2017 թվականի նոյեմբերի 23-25 Ծաղկաձոր**, միգրանտների և նրանց ընտանիքների անդամների համար իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների շրջանակում սեմինար-վարժանք Ուջան, Բյուրական, Կոշ, Օշական համայնքների բժշկական ամբուլատորիաների բուժաշխատողների համար:
20. **2017 թվականի դեկտեմբերի 5**, «Յոդի հագեցվածության հիմնախնդիրները Հայաստանում» վերապատրաստման դասընթաց՝ ներզատաբանների, ընտանեկան բժիշկների, թերապևտների, գինեկոլոգների, հաշվետվական ձևերը լրացնող վիճակագիրների համար:

2017 թվականի վերջին ավարտել է «Ոչ վարակիչ հիվանդությունների կառավարում և բուժում» ծրագրի 1-ին փուլը: 2015-2017թվականների ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվել է 35-68 տարիքային խմբի գլյուկոմետրիա և արյան գերճնշման հետազոտություն 18574 մարդու համար, 30-60 տարեկան կանանց շրջանում ՊԱՊ թեստի իրականացում՝ 5803 մարդու համար:

Սոցփաթեթի շրջանակներում մարզի բժշկական կազմակերպություններում հետազոտվել է մոտ 4318 սոցշահառու:

2017 թվականի ընթացքում մարզի բժշկական կազմակերպություններ ժամանակավոր բժիշկներ չեն ուղեգրվել: Մարզպետարանի կողմից իրականացվել են աշխատանքներ բժշկական հաստատությունները բժշկական կադրերով համալրման ուղղությամբ: Թալինի ԲԿ՝ 2 վիրաբույժ, 1 գինեկոլոգ, 1 մանկաբույժ, Ապարանի ԲԿ՝ 1 վիրաբույժ, 1 նյարդաբան, Արտենիի ԱԿ՝ 1 գինեկոլոգ: Պարբերաբար թարմացվում է բժիշկ-մասնագետների թափուր հաստիքների բազան: Մարզի բժշկական կազմակերպությունները աշխատավարձի և սոցվճարների գծով պարտքեր չեն ունեցել: 2017 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձը վճարվել է դեկտեմբերի ընթացքում:

Մարզպետի կողմից տրված հանձնարարականի հիման վրա մարզի բուժհաստատությունների ղեկավարների կողմից կատարվել է հատկացված դրամական միջոցների վերաբաշխում և առկա պարտքերը հասցվել են նվազագույնի \աշխատավարձի պարտքերը մարվել են\:

Դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների գծով միանվագ ձեռքբերումը չի գերազանցում եռամսյակի պահանջարկը: